

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայկ Բարայան Գևորգի

ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաթևոսյան Աշոտ Վարդադատի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մնացականյան Հայկ Գերասիմի

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Գյուլասարյան Միքայել Ռաֆայելի

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան


Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հունիսի 2-ին՝ ժամը 14:00 Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող թիվ 014 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ. ապրիլի 29-ին:

014 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



S. U. Մարտիրոսյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ֆինանսական համակարգի կայունությունը և հուսալիությունը արագ վերափոխվող թվային տեխնոլոգիաների դարաշրջանում պահանջում է հստակ տեսլականի մշակում, ներքին հսկողության համակարգի կատարելագործման նոր ուղիների բացահայտում: Վարկային կազմակերպություններում ևս ներքին հսկողության համակարգը նրանց արդյունավետ և անվտանգ գործունեության ապահովման կարևորագույն տարրն է: Օրենսդրական և կարգավորող միջավայրի մշտական փոփոխություններով, ինչպես նաև ֆինանսական շուկաների գլոբալացմամբ պայմանավորված վարկերը և ֆինանսական ծառայությունները դառնում են կարգավորիչների, հաճախորդների և այլ շահագրգիռ կողմերի ուշադրության առարկան: Արդյունավետ ներքին հսկողության համակարգը նպատակ ունի նվազեցնել ռիսկերը, պաշտպանել կազմակերպության ակտիվները, համապատասխանել օրենքներին և կարգավորող պահանջներին և, ընդհանուր առմամբ, ապահովել երկրի ֆինանսական համակարգի հուսալիությունն ու կայունությունը:

Վարկային հաստատություններում ներքին հսկողության համակարգը կարգավորվում է մի շարք իրավական ակտերով, այդ թվում՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով, առանձին կանոնակարգերով, ինչպես նաև ներքին ընթացակարգերով: Խարդախությունից պաշտպանությունը, գործառնական ռիսկի կառավարումը, կորպորատիվ ստանդարտներին և կանոնակարգերին համապատասխանության մոնիթորինգը, ինչպես նաև կազմակերպության բոլոր մակարդակներում ռիսկերի արդյունավետ կառավարման ապահովումը, որոնց վրա կենտրոնանում է ներքին հսկողության համակարգը, ներկայումս համարվում են ամենակարևոր ուղղությունները:

Վարկային ինստիտուտների հուսալիության ապահովման համար կարևոր դերակատարություն ունեն ոչ միայն պետական մարմինները, այլ նաև առանձին բանկերը և վարկային կազմակերպությունները: Պետական մարմինները՝ ի դեմս ՀՀ կենտրոնական բանկի, պետք է ապահովեն անհրաժեշտ օրենսդրական դաշտը և բավարար վերահսկողությունը, իսկ վարկային ինստիտուտները պետք է ոչ միայն կատարեն օրենսդրության պահանջները, այլ նաև շահագրգիռ ու հետևողական լինեն իրենց հուսալիության ամրապնդման գործում:

ՀՀ-ում վարկային կազմակերպությունները ստեղծվել են 1990-ական թվականներից և, ըստ էության, վարկային շուկայում վերջիններիս վերապահված է մասնագիտացված բանկերի գործառույթները՝ որոշակի բացառություններով: Վարկային կազմակերպությունները հիմնականում ֆինանսավորում են այնպիսի ոլորտների և հաճախորդների, որոնց բանկերը ձեռնպահ են մնում վարկավորելուց: Վարկային կազմակերպությունների կողմից առաջարկվող ծառայությունների քանակը վերջին տարիներին աճել է՝ հիփոթեքային վարկավորում, ՀՀ պետության կողմից ռազմավարական ծրագրերի ֆինանսավորում, լիզինգ և այլն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարկային կազմակերպությունները սկսել են պետության կողմից ընտրված ռազմավարական ծրագրեր ֆինանսավորել, վերջիններիս դերը տնտեսության մեջ ավելի է կարևորվել:

Միջազգային փորձում կայուն և զարգացած ցանկացած ընկերության գրավականը միջազգային օրենքներին և ստանդարտներին համապատասխան ներքին հսկողության համակարգ ունենալն է: Ներքին հսկողության համակարգը՝ ընկերության սկզբունքների, մոտեցումների ներքին մշակույթի մի ամբողջական համակարգ է, որում ընդգրկվում են ընկերության բոլոր աշխատակիցները, և այն ուղղված է ընկերության ռազմավարական նպատակների իրականացմանը¹:

Ինչպես ցանկացած ֆինանսական կառույց, այնպես էլ վարկային կազմակերպությունն առնչվում է ներքին հսկողության բոլոր բաղադրիչների հետ: Թեմայի կարևորությունը ՀՀ վարկային ինստիտուտների նկատմամբ պետության վերահսկողության և կարգավորման գործընթացում առկա խնդիրների բացահայտումն է և արհեստական բանականության միջոցով համապարփակ լուծումների առաջադրումն է:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է բացահայտել ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգերում առկա խնդիրները, թերությունները և մշակել կատարելագործման ուղիներ: Հետազոտության նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- իրականացնել վարկային ինստիտուտների միջազգային փորձի, ինչպես զարգացած երկրներում, այնպես էլ ՀՀ ֆինանսական համակարգին մոտ գտնվող Եվրասիական տնտեսական միության երկրների համեմատական վերլուծություն,

- ուսումնասիրել վարկային կազմակերպություններում ներքին հսկողության միջազգային փորձի կիրառվող մոտեցումները և բացահայտել ՀՀ վարկային կազմակերպություններում այդ գործընթացում առկա հիմնախնդիրները,

- բացահայտել ՀՀ վարկային կազմակերպությունների ֆինանսական կառավարման խնդիրները ընդհանուր վերահսկողության համատեքստում և տալ համապատասխան լուծման ուղիներ,

- արհեստական բանականության կիրառմամբ իրականացնել վարկային կազմակերպությունների ակտիվների նախընտրելի կառուցվածքի որոշում և առաջարկել ակտիվների կառուցվածքի վերակառուցման մոդելային լուծումներ,

- արհեստական բանականության գործիքներով կառուցված մոդելներով իրականացնել ներքին հսկողության գործառնական նպատակի բարելավում,

- մշակել վարկային կազմակերպությունների ներքին աուդիտի դիսկերի պլանավորման վրա հիմնված վերահսկողության մոտեցում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում գործող վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգերն են և գործունեության ֆինանսական արդյունքների ու կարգավորման օրենսդրական դաշտը: Հետազոտության առարկան ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգի կատարելագործմանը միտված հիմնախնդիրներն են:

Հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը:

¹ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 16.04.2013 թ. թիվ 102-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի 3-րդ կետ:

Ատենախոսությունում առաջարկվել է արտերկրյա փորձի, ինչպես նաև ՀՀ վարկային կազմակերպությունների նկատմամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից կիրառվող վերահսկողական քաղաքականության որդեգրած մոտեցման շրջանակներում բարելավել ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգը: Կորպորատիվ կառավարման ուսումնասիրությունների արդյունքում կարելի է փաստել, որ ՀՀ վարկային կազմակերպություններում գրեթե բացակայում են կորպորատիվ կառավարման սկզբունքները, որոշ ընկերություններում խորհրդի նախագահի և գործադիր տնօրենի պարտականությունները համատեղված են:

Ատենախոսության համար տեսամեթոդական հիմք են ծառայել հայրենական և արտասահմանյան տնտեսագետների տեսական և գործնական աշխատությունները: Օգտագործվել են՝ Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Եվրոպական Կենտրոնական բանկի, Դաշնային պահուստային համակարգի, Անգլիայի բանկի, Ֆրանսիայի կենտրոնական բանկի, Շվեյցարիայի Միջազգային հաշվարկների բանկի, ՀՀ կենտրոնական բանկի, Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի և Ուզբեկստանի Հանրապետությունների Կենտրոնական բանկերի, «Institute of Internal Auditors-Global»-ի, Հայաստանի Ներքին աուդիտորների ինստիտուտի, ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից սահմանված կարգով հրապարակված տեղեկությունները, Անգլիայի, Ամերիկայի Միացիալ Նահանգների, Ֆրանսիայի, Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի և Ուզբեկստանի Հանրապետությունների և ՀՀ ֆինանսաբանկային ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը, ինչպես նաև Անգլիայի, Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի, Հանրապետության և ՀՀ ֆինանսական կայունության հաշվետվությունները:

Ատենախոսության գիտական նորույթը:

Ատենախոսության ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում առանձնացվել են հետևյալ գիտական նորույթները.

- Կատարված ուսումնասիրությունների արդյունքում մշակվել են վարկային կազմակերպությունների ներքին հսկողության կանոնակարգման նվազագույն պայմաններ, որոնք միտված կլինեն ներքին հսկողության համակարգի բարձր ռիսկայնության նվազեցմանը:

- ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգի համալիր ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել մի շարք հիմնախնդիրներ՝ կապված օրենսդրական համապատասխանության, կորպորատիվ կառավարման և ներքին հսկողության մեխանիզմների հետ, ինչպես նաև առաջարկվել են վերջիններիս լուծման ուղիներ:

- Ֆինանսական ցուցանիշների ուսումնասիրության արդյունքում կառուցվել են ակտիվների արդյունավետ հսկողության երկու մոդելներ:

- ✓ առաջին մոդելով հնարավորություն է ընձեռնվում վարկային կազմակերպություններում առավել արդյունավետ վերահսկել ֆինանսական ռեսուրսները: Ներքին հսկողության տեսանկյունից մոդելը հնարավորություն է ընձեռում վերահսկողներին, սեփականատերերին, գործադիր մարմնին կարծիք կազմելու, արդյոք ընկերության գործունեությունը համապատասխանում է օրենսդրական և քիզնեսի ռազմավարական պահանջներին:

✓երկրորդ մոդելով ստացվում են ակտիվների կառուցվածքի տարաբնույթ սցենարային լուծումներ, ինչը կարևոր նշանակություն ունի ռազմավարական խնդիրներ առաջադրելու և արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար:

• Մշակվել է ներքին աուդիտի ռիսկի գնահատման ցուցանիշների համակարգ տասներկու գործակցով, որը միտված է ներքին հսկողության արդյունավետության բարձրացմանը և ռիսկերի նվազեցմանը:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարևոր նշանակություն ունեն ֆինանսական ընկերությունների, մասնավորապես վարկային կազմակերպությունների, ներքին հսկողության համակարգի ձևավորման, օրենսդրական պահանջների իրականացման, վերահսկողական աշխատանքների բարելավման, կորպորատիվ կառավարման համակարգերի ներդրման, ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարման գործընթացներում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնում: Ատենախոսական աշխատանքում քննարկված հարցերն ու հիմնական արդյունքները հրապարակվել են գիտական վեց հոդվածներում, որից չորս հոդված ԿԳԱՄՆ ԲԿԳԿ-ի կողմից ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականներում, երկու հոդված Scopus գիտաչափական շտեմարանում ընդգրկված պարբերականներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքը շարադրված է մեքենագիր 154 էջի վրա, պարունակում է 25 աղյուսակ, 6 գծապատկեր, 136 անուն գրականության ցանկ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առաջին՝ «Վարկային կազմակերպությունների դերը տնտեսության զարգացման գործում և դրանցում կիրառվող ներքին հսկողության մոտեցումները» գլխում իրականացվել է վարկային կազմակերպությունների էության և առանձնահատկությունների ուսումնասիրություն, վարկային ինստիտուտների միջազգային փորձի համեմատական վերլուծություն և վարկային կազմակերպություններում ներքին հսկողության միջազգային փորձի կիրառվող մոտեցումների ուսումնասիրություն և ՀՀ-ում առկա հիմնախնդիրների բացահայտում: Յուրաքանչյուր վարկային կազմակերպություն իր ռազմավարության շրջանակներում անհրաժեշտաբար ձգտում է ձևավորել ներքին հսկողության համակարգ և կիրառել արդյունավետ գործիքներ: Նշված դիտարկումը խիստ կենսական է արտերկրի փորձի, ինչպես նաև ՀՀ առևտրային բանկերի նկատմամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից կիրառվող վերահսկողական քաղաքականության որոշեցումներ, սակայն ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգի տեսանկյունից անհրաժեշտ են հիմնարար լուծումներ, ինչու չէ նաև արտերկրի և ՀՀ առևտրային բանկերի փորձի կիրառում: Միջազգային փորձի ուսումնասիրության ընթացքում

վերլուծվել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի ֆինանսական համակարգերը: Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի ֆինանսական համակարգերի ուսումնասիրությունների արդյունքում կարելի է փաստել, որ վերջիններին ընկերությունների համար կարգավորող և վերահսկող մարմինների կողմից սահմանված են կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման, պարտականությունների բաշխման, գործընթացների պահպանման, ներքին և արտաքին աուդիտների գնահատման, գործընթացների կանոնակարգման, տեղեկատվության անվտանգության փաստաթղթեր:

Ֆինանսական համակարգերի վերահսկողական խնդիրներն առավել ընդգրկուն պատկերացնելու նպատակով՝ ուսումնասիրվել են զարգացվածության առումով ՀՀ ֆինանսական համակարգին մոտ գտնվող Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներ Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի Հանրապետության, ինչպես նաև Ուզբեկստանի Հանրապետության վարկային կազմակերպությունների ֆինանսական համակարգերը: Ռուսաստանի Դաշնության ոչ բանկային վարկային կազմակերպությունները պարտավոր են ունենալ ներքին աուդիտի ստորաբաժանում, կազմակերպել և իրականացնել ներքին հսկողության գործառույթներ: Ղազախստանի Հանրապետությունում վարկային ընկերակցությունները օրենսդրությամբ պարտավոր են ունենալ վերստուգիչ հանձնաժողով, իսկ ոչ բանկային ֆինանսական կազմակերպությունների գործառնությունները Ղազախստանի Հանրապետությունում կանոնակարգվում է նաև վերջիններիս բանկերի և բանկային գործառնությունների մասին օրենքով՝ նշված ընկերությունները ներքին հսկողության կառավարման նպատակով պարտավոր են ունենալ ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգ, ներքին աուդիտի ստորաբաժանումներ: Ուզբեկստանի ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի օրենսդրության, նորմատիվ իրավական ակտերի և երկրի նախագահի՝ վերափոխում իրականացնելու վերաբերյալ 2020 թվականի մայիսի 12-ի հրամանի ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դառնում, որ երկրում առկա է ֆինանսական համակարգի բարելավման խնդիրներ²:

Միջազգային նորմերին համապատասխան ներքին հսկողության առկայությունը երաշխավորում է ռազմավարական կարևոր նպատակների իրականացում և կատարողականների բարելավում: Միջազգային նորմերը հնարավորություն են տալիս մշակել արդյունավետ ներքին հսկողության համակարգեր, որոնք հարմարվում են թիզնեսի ամենօրյա փոփոխություններին և գործառնական միջավայրերին, միաժամանակ նվազեցնելով ռիսկերն ընդունելի մակարդակների, նպաստելով արդյունավետ որոշումների կայացմանն ու կառավարմանը³:

Կորպորատիվ կառավարման հետ կապված ուսումնասիրություններից կարելի է փաստել, որ ՀՀ վարկային կազմակերպություններում գրեթե բացակայում է կորպորատիվ կառավարման սկզբունքները, նույնիսկ որոշ ընկերություններում խորհրդի նախագահի և գործադիր տնօրենի պարտականությունները համատեղված են:

² Ուզբեկստանի նախագահի 12.05.2020 թ-ի վերափոխում իրականացնելու վերաբերյալ հրաման, <https://lex.uz/ru/docs/4811037>:

³ Ներքին հսկողության COSO ձեռնարկ, 2013 թ-մայիս էջ 1, https://www.coso.org/files/ugd/3059fc_1df75ddc38074006bce8fd621a942cf.pdf:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում կարելի է եզրակացնել, որ ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության կանոնակարգման նվազագույն պայմաններ սահմանող որևէ նորմ սահմանված չէ, որը պատճառ է հանդիսանում ներքին հսկողության համակարգի բարձր ռիսկայնության համար:

Ատենախոսության երկրորդ՝ «Վարկային կազմակերպությունների ներքին հսկողության մոտեցումները և նոր լուծումները արհեստական բանականության համատեքստում» գլխում ուսումնասիրվել են ՀՀ վարկային կազմակերպությունների ֆինանսական կառավարման խնդիրները ընդհանուր վերահսկողության համատեքստում, և արհեստական բանականության կիրառմամբ առաջարկվել է վարկային կազմակերպությունների ակտիվների նախընտրելի կառուցվածքի որոշման մոտեցում և ակտիվների բաշխման մոդելային լուծումներ: Վարկային կազմակերպությունները, որպես ֆինանսական ինստիտուտների յուրահատուկ օղակ, ունեն իրենց բնորոշ ֆինանսական կառավարման առանձնահատկությունները: Խնդիր է դրվել ուսումնասիրել ընտրանքային կարգով ընտրված ՀՀ վարկային կազմակերպություններում ֆինանսական կառավարման մոտեցումները մասնավորապես՝ ակտիվների, կապիտալի, շահույթի համեմատական վերլուծության միջոցով վեր հանել վերահսկողության գործընթացում առկա բացերը:

Ստորև ներկայացվում է ՀՀ վարկային կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշները, որոնք հավաքագրվել են վերջիններիս կայքերից:

Աղյուսակ 1.

ՀՀ վարկային կազմակերպություններում հիմնական ցուցանիշների շարժընթաց վերլուծությունը⁴

Տարեթիվ	Ակտիվներ		Կապիտալ		Շահույթ հարկումից հետո		ROA	ROE
	Գումար	Ակտիվ /ՀՆԱ	Գումար	Կապիտալ /ՀՆԱ	Գումար	Շահույթ /ՀՆԱ		
2013	214,834,548	4.72%	82,105,667	1.80%	6,210,283	0.14%	2.89%	7.56%
2014	273,057,039	5.65%	112,765,462	2.34%	7,942,335	0.16%	2.91%	7.04%
2015	296,671,889	5.88%	137,802,107	2.73%	10,061,300	0.20%	3.39%	7.30%
2016	348,334,879	6.87%	175,867,719	3.47%	11,811,089	0.23%	3.39%	6.72%
2017	403,682,288	7.25%	214,602,762	3.86%	16,228,879	0.29%	4.02%	7.56%
2018	470,356,258	7.82%	256,983,568	4.27%	18,899,155	0.31%	4.02%	7.35%
2019	533,861,674	8.16%	288,362,952	4.41%	16,182,306	0.25%	3.03%	5.61%
2020	548,404,445	8.87%	313,714,374	5.07%	13,152,179	0.21%	2.40%	4.19%
2021	588,304,683	8.41%	333,489,639	4.77%	22,947,412	0.33%	3.90%	6.88%
2022	574,838,095	6.76%	328,886,762	3.87%	19,195,682	0.23%	3.34%	5.84%
2023	644,147,288	6.81%	346,010,080	3.66%	18,733,102	0.20%	2.91%	5.41%
2024	698,162,785	6.89%	367,780,878	3.63%	28,146,458	0.28%	4.03%	7.65%

2024 թ-ի IV եռամսյակի Վարկային կազմակերպությունների հաշվեկշիռների ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ վերջիններս ակտիվների բաշխվածության մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում հաճախորդներին տրված

⁴ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ ընտրված և հետազոտված վարկային կազմակերպությունների կողմից հրապարակված ֆինանսական ցուցանիշները:

վարկերը և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարները: Ակտիվների բաշխվածության ամփոփ նկարագիրը ներկայացվում է ստորև:

Աղյուսակ 2.

«Վարկային կազմակերպությունների ակտիվների բաշխվածության գնահատումը»⁵

Անվանում	Տոկոս ընդհանուր ակտիվների մեջ 2013	Տոկոս ընդհանուր ակտիվների մեջ 2024
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	74%	58%
Վարձակալության գծով ստացվելիք գումարներ	4%	16%
Վաճառքի համար նախատեսված ներդրումներ	3%	15%
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	13%	4%
Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	3%	4%
Այլ ակտիվներ	4%	4%

Ակտիվների կառուցվածքից կարելի է եզրակացնել, որ վերջին տարիներին վարկային կազմակերպությունների կողմից վարկերի գծով ֆինանսավորումը նվազել է, սակայն աճել է ֆինանսական վարձակալության գծով ներդրումները: Ֆինանսական վարձակալության գծով ներդրումների աճը կապված է վերջին տարիներին օրենսդրական բարեփոխումների, պետական աջակցության ծրագրերի, մատակարարների կտրուկ աճի, շինարարական ոլորտի, գյուղատնտեսական և այլ ոլորտների զարգացման հետ: Հարկ է նշել նաև, որ ակտիվ ներդրումներ են կատարվել արժեթղթերի ոլորտներում, որը կարելի է բացատրել «ՎԲ կողմից իրականացվող դրամավարկային գործիքների կիրառմամբ: Այս քայլում կատարված վերլուծության արդյունքները ցույց տվեցին, որ «Վարկային կազմակերպությունների ակտիվները կարելի է ավելի արդյունավետ բաշխել և կառավարել (օրինակ՝ ֆինանսական վարձակալությունների և վաճառքի համար նախատեսված բարձր եկամտաբերություն ունեցող ակտիվների մեջ): Վարկային կազմակերպությունում բացակայում են հեռանկարային զարգացման ծրագրերի հաստատման մեթոդաբանությունը: Ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ վարկային կազմակերպությունների գծով տարեկան հեռանկարային ծրագրերի կազմման նվազագույն պահանջներ առկա չեն:

Ներկայացված աղյուսակ 3-ից երևում է, որ 2024 թ-ի ընդհանուր կապիտալի ցուցանիշը 2013 թվականի ցուցանիշի նկատմամբ աճել է շուրջ 348%-ով, միջին

⁵ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով «Վ» ընտրված և հետազոտված վարկային կազմակերպությունների կողմից հրապարակված ֆինանսական ցուցանիշները:

ցուցանիշը կազմել է 246,530,998 հազ. ՀՀ դրամ: 2013-ից 2024 թթ.-ի ընթացքում ընդհանուր կապիտալը ընդհանուր առմամբ աճել և միջինում կազմել է ՀՆԱ-ի 3.66%-ը: 2013 և 2024 թվականների կապիտալների կառուցվածքները ներկայացված է ստորև:

Աղյուսակ 3.

ՀՀ վարկային կազմակերպությունների կապիտալի բաշխվածության գնահատումը⁶

Կապիտալ	2013		2024	
	Գումար հազ ՀՀ դրամ	Տոկոս	Գումար հազ ՀՀ դրամ	Տոկոս
Կանոնադրական կապիտալ	60,182,553	73%	235,359,712	64%
Էմիսիոն եկամուտ			6,916,981	2%
Պահուստներ	2,867,806	1%	12,495,029	3%
Գլխավոր պահուստ	1,525,495	<u>53%</u>	10,226,117	<u>82%</u>
Վերագնահատման պահուստներ	1,342,311	<u>43%</u>	2,268,912	<u>18%</u>
Կուտակված շահույթ	19,055,308	23%	113,009,156	31%
Ընդամենը կապիտալ	82,105,667		367,780,878	

Կատարված ուսումնասիրություններից կարելի է եզրակացնել, որ 2024 թ-ի կապիտալը 2013 թ-ի ցուցանիշի նկատմամբ աճել է 348% տոկոսով, որը տալիս է առավել մեծ ռիսկեր ստանձնելու և նոր ոլորտներ ֆինանսավորելու հնարավորություններ: Հաշվի առնելով վերջին տարիների վարկային շուկայի և լիզինգային շուկայի զարգացման տեմպերը մեր կարծիքով կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի նվազագույն շեմերը ենթակա են փոփոխման ինչը կբերի լրացուցիչ ռիսկերի զսպման:

Ներկայացված աղյուսակ 1-ից երևում է, որ 2024 թ-ի շահույթի ցուցանիշը 2013 թվականի ցուցանիշի նկատմամբ աճել է շուրջ 353%-ով, միջին ցուցանիշը կազմել է 15,792,515 հազ. ՀՀ դրամ: 2013-ից 2024 թթ.-ի ընթացքում շահույթը ընդհանուր առմամբ աճել է և միջինում կազմել է ՀՆԱ-ի 0.24%-ը:

Հետազոտված վարկային կազմակերպությունները ընդհանուր առմամբ աշխատել են շահույթով, իսկ ROA և ROE ցուցանիշները 2013 թ-ի նկատմամբ աճել են:

Վերլուծության արդյունքների հիման վրա վեր են հանվել ՀՀ վարկային կազմակերպություններում ներքին հսկողության տեսանկյունից լուծում պահանջող հետևյալ խնդիրները.

⁶ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ ընտրված և հետազոտված վարկային կազմակերպությունների կողմից հրապարակված ֆինանսական ցուցանիշները:

- վարկային կազմակերպություններում ակտիվների արդյունավետ կառավարման և բաշխման մեխանիզմները անկատար են և թերի,
- վարկային կազմակերպություններում կորպորատիվ կառավարման համակարգային կարգավորման մեխանիզմները թերի են և ոչ ամբողջական,
- բացակայում է ռազմավարական կառավարման կարգավորման և գնահատման մեխանիզմները,

- << վարկային համակարգում ներքին հսկողության դիտարկումների արդյունավետ և նպատակային կիրառման մեխանիզմները թերի են և անկատար,

- վերջին տարիների վարկային շուկայի և լիզինգային շուկայի զարգացման տեմպերը հաշվի առնելով, կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի նվազագույն շեմերի նորմատիվների պահանջները խիստ անհրաժեշտ է վերանայել:

Սույն ենթահարցի շրջանակներում կիրառված մեթոդաբանության հիմքում ընկած է շահույթ, եկամուտ, կապիտալ, պարտավորություններ, մաթեմատիկական մոդելների կառուցում՝ մեքենայական ուսուցման մեթոդների կիրառմամբ:

Հավաքագրվել են ընտրված և հետազոտված վարկային կազմակերպությունների տասը տարվա ֆինանսական ցուցանիշները (ցուցանիշները հավաքագրվել են վերջիններիս հրապարակային հաշվեկշիռների և եկամուտ/ծախսերի հաշվետվություններից): Հաշվարկվել են ակտիվների կառուցվածքի շահույթ, եկամուտ, կապիտալ, պարտավորությունների կոռելյացիոն գործակիցները:

Ստացված կոռելյացիոն գործակիցներից բացահայտվել է շահույթի, եկամտի, պարտավորությունների, կապիտալի և ակտիվների կառուցվածքի առկա կախվածությունները՝ վերջիններս էլ կիրառվել են մեքենայական ուսուցմամբ մոդելների ստացման համար:

Մոդելները ստանալու համար մուտքային փոփոխականները նշանակենք X վեկտորով, իսկ ելքային փոփոխականները՝ Y : Ստանալով, որ նրանց միջև առկա է որոշակի կախվածություն, ընդհանրացված հավասարումը կարելի է ներկայացվել հետևյալ տեսքով՝

$$Y = f(X) + \epsilon \tag{1.7}$$

որտեղ $X = (x_1, x_2, \dots, x_p)$, ϵ -ն X փոփոխականներից անկախ սխալանքի պատահական մեծությունն է, իսկ f -ն X -ից կախված անհայտ ֆունկցիան է: Մեքենայական ուսուցման հիմնական խնդիրն է դառնում գտնել $f(X)$ անհայտ ֆունկցիան: Քանի որ ϵ սխալանքը կախված չէ X փոփոխականներից և իրենից ներկայացնում է պատահական մեծություն, ապա ամբողջությամբ ճշգրիտ ստանալ Y փոփոխականի կախվածությունը դառնում է անհնար: Այդ իսկ պատճառով դիտարկում ենք մոտարկված հավասարումը, որը փոքր սխալանքի դեպքում կարող ենք ներկայացնել հետևյալ բանաձևով՝

$$\hat{Y} = \hat{f}(X) \tag{2.8}$$

որտեղ \hat{f} -ը f ֆունկցիայի մոտարկումն է, իսկ \hat{Y} -ը Y փոփոխականի կանխագուշակած արժեքը: Մեքենայական ուսուցումը փորձում է ընտրել \hat{f} ֆունկցիայի այնպիսի պարամետրեր, որոնց ժամանակ Y և \hat{Y} փոփոխականները լինեն հնարավորինս իրար մոտ: Դա իրականացնելու համար անհրաժեշտ է դառնում նվազեցնել

⁷ An Introduction to Statistical Learning with Applications in Python (Springer, 2023, էջ 15 բանաձև 2.1:

⁸ An Introduction to Statistical Learning with Applications in Python (Springer, 2023, էջ 17 բանաձև 2.2:

կանխագուշակման սխալանքը, որը կարելի է ներկայացնել նվազեցվող և չնվազեցվող բաղադրիչների տեսքով՝

$$E(Y - \hat{Y})^2 = E[f(X) + \epsilon - \hat{f}(X)]^2 = [f(X) - \hat{f}(X)]^2 + Var(\epsilon) \quad 3^9$$

որտեղ $E(Y - \hat{Y})^2$ ցույց է տալիս սխալանքի միջին կամ ակնկալվող արժեքը, $[f(X) - \hat{f}(X)]^2$ -ը սխալանքի նվազեցվող բաղադրիչն է, իսկ $Var(\epsilon)$ -ն պատահական սխալանքի վարիացիան է, որը իրենից ներկայացնում է չնվազեցվող բաղադրիչը: Մեքենայական ուսուցման ընթացքում հնարավոր է նվազեցնել սխալանքի միայն նվազեցվող բաղադրիչը:

Մեքենայական ուսուցմամբ $\hat{f}(X)$ ֆունկցիան որոշելու համար անհարժեշտ է ընտրել դրա տեսքը կամ մոդելը: Տարածված մոդելներից է համարվում գծային ռեգրեսիան, որը թույլ է տալիս մուտքային և ելքային փոփոխականների կապը ներկայացնել գծային հավասարումների տեսքով: Մի քանի մուտքային փոփոխականների դեպքում պետք է վերցնենք բազմաչափ գծային ռեգրեսիոն մոդելը, որը կարող ենք ներկայացնել հետևյալ բանաձևով՝

$$Y(X) = \beta_0 + \beta_1 x_1 + \beta_2 x_2 + \dots + \beta_p x_p + \epsilon \quad 4^{10}$$

2 և 4 բանաձևերից կանխագուշակող մոդելը կստացվի՝

$$\hat{Y} = \hat{\beta}_0 + \hat{\beta}_1 x_1 + \hat{\beta}_2 x_2 + \dots + \hat{\beta}_p x_p \quad 5$$

$\hat{\beta}_0, \hat{\beta}_1, \dots, \hat{\beta}_p$ պարամետրերը որոշվում են քառակուսային տարբերությունների գումարի (sum of squared residuals (RSS)) օպտիմալացման խնդրի լուծմամբ, որը ներկայացված է ստորև՝

$$RSS = \sum_{i=1}^n (y_i - \hat{y}_i)^2 = \sum_{i=1}^n (y_i - \hat{\beta}_0 - \hat{\beta}_1 x_1 - \hat{\beta}_2 x_2 - \dots - \hat{\beta}_p x_p)^2 \quad 6^{11}$$

Առաջին մոդելով ուսումնասիրվել են ընտրված և հետազոտված վարկային կազմակերպությունների տասը տարվա ֆինանսական ցուցանիշների շահույթ, եկամուտ, կապիտալ, պարտավորությունների կոռելյացիոն գործակիցները:

Առաջին մոդելի լուծումներով ստացված կոռելյացիոն գործակիցներից պարզում ենք, որ շահույթի, եկամտի, պարտավորությունների, կապիտալի և ակտիվների կառուցվածքի մեջ առկա է նկատելի կախվածություն:

Արհեստական բանականության շրջանակներում մեր կողմից դրված խնդիրը լուծելու համար իրականացվել է ռեգրեսիոն մոդելների մեքենայական ուսուցում:

Առաջին մոդելի շրջանակներում օպտիմալացման խնդիրն է՝ ունենալով ակտիվների թվային արժեքը և շահույթ եկամուտ հարաբերության ցանկալի տոկոսային արժեքը, ստանալ ակտիվների նախընտրելի կառուցվածքը:

Փորձը իրականացվել է «Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ վարկային կազմակերպության՝ 31 դեկտեմբերի 2022 թվականի հրապարակված ցուցանիշների հիման վրա: Ունենալով ակտիվների թվային արժեքը և շահույթ/եկամուտ հարաբերության ցանկալի տոկոսային արժեքը, ստացել ենք ակտիվների օպտիմալ կառուցվածքը, ընդունելով որ հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների ու վարձակալության գծով ստացվելիք գումարները պետք է կազմեն նվազագույնը ակտիվների 70%-ը:

⁹ An Introduction to Statistical Learning with Applications in Python (Springer, 2023, էջ 18 բանաձև 2.3:

¹⁰ An Introduction to Statistical Learning with Applications in Python (Springer, 2023, էջ 70 բանաձև 3.1:

¹¹ An Introduction to Statistical Learning with Applications in Python (Springer, 2023, էջ 78 բանաձև 3.16:

Հաջորդ ենթահարցում ներկայացվել է ակտիվների մոդելային լուծումները:

Ակտիվների կառուցվածքի օպտիմալ լուծումներ գտնելու նպատակով և առաջին մոդելի կատարելագործման, վերահսկողական հնարավորությունները ընդլայնելու նպատակով այս ուսումնասիրության ընթացքում արհեստական բանականության լուծումների համատեքստում կանխատեսման գործընթացները իրականացրել ենք ROA և ROE ցուցանիշներով: Խնդրի լուծման քայլերը հետևյալն են՝ օպտիմալացման խնդրում հարկ է ավելացնել երկու մուտքային գործակից՝ ROA_{target} և ROE_{target} -ը, որոնց միջոցով կարող ենք հստակեցնել ցանկալի ROA և ROE գործակիցները: Ընտրված ցուցանիշների միջակայքում էլ մեր կողմից կառուցված ուսուցման երկրորդ մոդելը ընտրում է ակտիվների բաշխման հնարավոր լուծումներ:

Արդյունքում երկրորդ մոդելը կախված ROA, ROE ընտրանքից և իրական զուտ շահույթի ցուցանիշը համարելով նվազագույն կետ կարող է առաջարկել ակտիվների սահմանային հնարավոր նախընտրելի միջակայքեր (փորձը իրականացվել է «ՔԱՐԴ Ագրոկրեդիտ» ՈՒԿ ԲԲԸ 31.12.2024 թվականի հրապարակված ցուցանիշների հիման վրա):

Կախված մեր կողմից տրված հանձնարարականի և հողվածների միջև առկա կոռելյացիոն կախվածություններից մոդելը առաջարկել է վերոնշյալ լուծումները: Նորմատիվ իրավական ակտերի, բիզնեսի առանձնահատկությունների, սեփականատերերի պահանջներից ելնելով մոդելը հնարավորություն է տալիս կատարելու ռազմավարական և/կամ մարտավարական անհրաժեշտ ճշգրտումներ:

Առենախոսության երրորդ՝ «Հ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգի կատարելագործման ուղիները» գլխում մշակվել է արհեստական բանականության գործիքներով կառուցված մոդելներով ներքին հսկողության կատարելագործման ուղիներ և ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին աուդիտի ռիսկերի վրա հիմնված վերահսկողության մոտեցում:

Արհեստական բանականության (AI) մոդելների օգտագործմամբ վարկային կազմակերպություններում ներքին վերահսկողության համակարգի կատարելագործումը կարող է զգալիորեն բարձրացնել գործընթացների արդյունավետությունը, նվազեցնել ռիսկերը և բարելավել հաճախորդների սպասարկման որակը:


Ընկերության գործունեության առանձնահատկություններից ելնելով՝ ընկերությունում պետք է ստեղծվի վերջինիս նպատակներին համապատասխան ռիսկով միտված ներքին աուդիտի ծրագիր: Աուդիտի տարեկան ծրագիրը պետք է հիմնված լինի իրականացվող փաստաթղթավորված ռիսկերի գնահատման վրա: Աուդիտի յուրաքանչյուր ոլորտ պետք է ըստ ռիսկերի առաջնահերթության և տեղի ունենալու հավանականության գնահատվի: Ներքին աուդիտի ծրագիրը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել գործադիր ղեկավարության խորհրդի և այլ շահագրգիռ անձանց սպասելիքները: Ներքին աուդիտի ծրագիրը պարտադիր պետք է հաստատվի գործադիր ղեկավարության և խորհրդի կողմից, ինչպես նաև ռեսուրսների նկատմամբ պահանջարկը՝ այդ թվում նաև էական միջանկյալ փոփոխությունները¹²: Առաջարկվող

¹² Գծագիրը Ներքին աուդիտի ինստիտուտի աշխատակազմ, 2020թ «Ռիսկով միտված ներքին աուդիտի տարեկան ծրագրի ուղեցույց» 43 էջ <https://www.theiia.org/globalassets/documents/content/articles/guidance/practice-guides/developing-a-risk-based-internal-audit-plan/pg-developing-a-risk-based-internal-audit-plan.pdf>.

մոդելային լուծումների միջոցով ստացված շեմերը կարելի է օգտագործել ստուգման ոլորտները ուսումնասիրելու և գերաձախներն ու թերացումները բացահայտելու նպատակով: Գործակիցների վերլուծությունը ներառում է ֆինանսական փոփոխականների միջև հարաբերությունների քանակական գնահատում, մասնավորապես՝ ֆինանսական վիճակի և շահույթի կամ փաստի հաշվետվությունների տվյալների հիման վրա: Գործակիցների վերլուծությունը նպատակահարմար է խմբավորել չորս հիմնական կատեգորիաների

- Շահութաբերության,
- պարտքի և ֆինանսական լծակի,
- իրացվելիության,
- ներդրումային:

Ստորև ներկայացվում է ռիսկով միտված աուդիտի ծրագրի ստեղծման քայլերի հերթականությունը.



Գծապատկեր 1 Ռիսկով միտված ներքին աուդիտի ծրագրի հաստատման և իրականացման ընթացակարգ¹³.

¹³ Ներքին աուդիտի ինստիտուտի աշխատակազմ, 2020թ «Ռիսկով միտված ներքին աուդիտի տարեկան ծրագրի ուղեցույց» էջ 6:

Ամփոփելով ատենախոսության ընթացքում կատարված գիտամեթոդաբանական ուսումնասիրություններից բխող եզրահանգումները՝ կատարել ենք ներքոհիշյալ հիմնական շեշտադրումները:

• ՀՀ կենտրոնական բանկն իր հիմնական նպատակներից՝ Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական կայունության ապահովման դիտակետից ՀՀ վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորում և վերահսկում է նաև տնտեսական նորմատիվների միջոցով: Ցանկացած տնտեսվարող, այդ թվում վարկային կազմակերպությունը, իր ռազմավարական ծրագրերի իրականացման գործընթացում ձգտում է ձևավորել ներքին հսկողության համակարգ, որն իրենից ներկայացնում է սկզբունքների, մոտեցումների և ներքին մշակույթի մի ամբողջական համակարգ, որն ընդգրկում է ողջ ընկերությունը և կոչված է ընկերության ռազմավարության իրականացման գործընթացի կառավարելիության և հուսալիության ապահովմանը: Վերոներկայացվածը խիստ կենսական է արտերկրի փորձի, ինչպես նաև ՀՀ առևտրային բանկերի նկատմամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից կիրառվող վերահսկողական քաղաքականության որդեգրած մոտեցմամբ, սակայն ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգի տեսանկյունից անհրաժեշտ են հիմնարար լուծումներ, ինչու չէ, նաև արտերկրի և ՀՀ առևտրային բանկերի փորձի կիրառում:

• Ատենախոսության շրջանակներում իրականացված միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում կարող ենք փաստել, որ Անգլիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի ֆինանսական համակարգերը կարգավորող և վերահսկող մարմինների կողմից՝ ֆինանսական ընկերությունների նկատմամբ, սահմանված են կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման, պարտականությունների բաշխման, գործընթացների պահպանման, ներքին և արտաքին աուդիտների գնահատման գործընթացները, ինչն ամրագրված է համապատասխան իրավական փաստաթղթերում:

• ՀՀ ֆինանսական շուկային մոտ գտնվող ԱՊՀ երկրներից ուսումնասիրվել են Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության ֆինանսական համակարգերի համապատասխան ոլորտները, որի արդյունքում արձանագրել ենք հետևյալ փաստերը.

1. Ռուսաստանի Դաշնությունում պետության լիազորված կառույցը կարևորելով ներքին հսկողության համակարգի տեղը և դերը ոչ բանկային վարկային կազմակերպությունների գործունեությունում, համապատասխան իրավական նորմերով կարգավորել է ներքին հսկողության համակարգի և ներքին աուդիտի գործառույթները:

2. Այլ պատկեր է Ղազախստանի Հանրապետությունում, այն է՝ վարկային ընկերությունները պետք է ունենան վերստուգիչ հանձնաժողով, իսկ ոչ բանկային ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը կանոնակարգվում են նաև բանկերի և բանկային գործառնությունների մասին օրենքով: Նշված ընկերությունները ներքին հսկողության համակարգի կառավարման նպատակով պարտավոր են ունենալ հսկողական գործառույթներ, մասնավորապես ռիսկերի կառավարման և ներքին աուդիտի ստորաբաժանումների տեսքով:

3. Ուզբեկստանի ֆինանսական համակարգը կարգավորող օրենսդրական դաշտի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ երկրում առկա են ֆինանսական համակարգի բարելավման խնդիրներ:

- Վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական փաստաթղթերում սահմանված չեն ներքին հսկողության գործընթացների և ներքին աուդիտի գործունեությունը կարգավորող որևիցե պահանջ: Ինչպես արդեն նշել ենք, ներքին հսկողության գործընթացներն ուղղված են ռազմավարական ծրագրի իրականացմանը, սակայն այդ պարագայում ներքին աուդիտի բացակայությունը կարող է ներքին հսկողության համակարգի համար ձևավորել գործառնական ռիսկեր և/կամ խնդիրներ: Ներքին աուդիտի գործառույթներն ուղղված են կորպորատիվ և ռիսկերի կառավարման, ինչպես նաև հաշվետվողականության համակարգի հուսալիության և արդյունավետության ապահովմանը: Վերոնշյալը հավաստիացվում է «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4, 2013 թ., թիվ 102 որոշման 164-րդ կետով¹⁴:

- Ուսումնասիրության ընթացքում բացահայտված խնդիրները փաստում են ՀՀ վարկային կազմակերպությունների կորպորատիվ կառավարման համակարգի կանոնակարգվածության բացակայության մասին, որն էլ պատճառ է հանդիսանում կորպորատիվ կառավարման ոլորտում արձանագրված բազում խնդիրների և ռիսկերի ձևավորման գործում:

- ՀՀ-ում ընտրված և հետազոտված վարկային կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշների վերլուծության արդյունքների հիման վրա վեր են հանվել ներքին հսկողության տեսանկյունից լուծում պահանջող խնդիրներ՝

- ✓ Ակտիվների արդյունավետ կառավարման և բաշխման մեխանիզմները վարկային կազմակերպություններում թերի են և անկատար,

- ✓ Կորպորատիվ կառավարման համակարգային կարգավորման մեխանիզմները վարկային կազմակերպություններում թերի են և ոչ լիարժեք,

- ✓ Բացակայում են ռազմավարական կառավարման գնահատման և կարգավորման մեխանիզմները,

- ✓ ՀՀ վարկային կազմակերպություններում ներքին հսկողության դիտարկումների արդյունավետ և նպատակային կիրառման գործիքները թերի են,

- ✓ ՀՀ վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի նվազագույն շեմերի նորմատիվների պահանջները խիստ անհրաժեշտ է վերանայել՝ հաշվի առնելով վերջին տարիների լիզինգային և վարկային շուկայի զարգացման տեմպերը,

- Ընտրված և հետազոտված հայաստանյան վարկային կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշների ուսուցման արդյունքում արհեստական բանականության միջոցով կառուցվել են ակտիվների կառուցվածքի արդյունավետ կառավարման երկու մոդելներ:

- ✓ Առաջին մոդելը հնարավորություն է ստեղծում արդյունավետ կառավարել ֆինանսական ռեսուրսները վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգի շրջանակներում: Ընկերության գործունեությունն օրենսդրական և քիզնեսի ռազմավարական պահանջներին համապատասխանեցնելու դերում մոդելները

¹⁴ «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4, 2013 թ., թիվ 102 որոշում:

ներքին հսկողության տեսանկյունից մեծ դեր են կատարում վերահսկողներին, սեփականատերերին, գործադիր մարմնին արժեքավոր կարծիք կազմելու համար:

✓ Ուսուցման երկրորդ մոդելով ստացվում են ակտիվների կառուցվածքի տարաբնույթ սցենարային լուծումներ ռազմավարական խնդիրներ առաջադրելու և հնարավոր լուծումներ գտնելու համար, որոնք որոշումներ կայացնողների համար առկա հնարավորություններն առավել արդյունավետ օգտագործելու համատեքստում ունեն կարևոր նշանակություն:

• Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տարիներին ՀՀ վարկային կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշները աճել են, համակարգային հնարավոր ռիսկերից խուսափելու նպատակով առաջարկել ենք՝

✓ օրենսդրական փոփոխությունների միջոցով սահմանել ներքին աուդիտի աշխատանքների միջազգային մոտեցումներին համապատասխան պլանավորման պահանջ,

✓ Ներքին աուդիտի պլանավորման աշխատանքներում սահմանել ընկերությունների ուսումնասիրության, ռիսկերի բացահայտման, ռեսուրսների տեղաբաշխման և ծրագրի հաստատման նվազագույն պայմաններ:

✓ Սահմանել վարկային կազմակերպությունների ռիսկերի շրջանակների տիպային օրինակներ:

✓ Ներքին աուդիտի պլանավորման աշխատանքներն ընկերության նպատակներին համապատասխանելու համար սահմանել անհրաժեշտ գործընթացների նվազագույն շարք:

✓ «ԱՐԵԳԱԿ» ՈՒՎԿ ՓԲ և «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲ ընկերությունների համար մոդելային լուծումներով կանխատեսված ակտիվների կառուցվածքներին համապատասխան առաջարկել ենք ներքին հսկողության՝ շահութաբերության, պարտքի և ֆինանսական լծակի, իրացվելիության, ներդրումային ուղղություններով ցուցանիշների համախմբեր և դրանց սահմանային միջակայքեր:

Առենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. **L. Grigoryan, H. Babayan** Comparative analysis of the financial systems of the United Kingdom of Great Britain and Northern Ireland and the Republic of Armenia, «Messenger of ASUE», N2, 2(74), նոյեմբեր, Երևան, 2023, էջ 24-45, [DOI: 10.52174/1829-0280_2023.2-24](https://doi.org/10.52174/1829-0280_2023.2-24).
2. **H. Babayan**, Improving the financial indicators of credit organizations using machine learning, «**Journal of economics, finance and accounting**» N1 (13), մայիս, Երևան, 2024, էջ 153-173 DOI: <https://doi.org/10.59503/29538009-2024.1.13-153>.
3. **Ա. Մաթևոսյան, Հ. Բաբայան** ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին աուդիտի ռիսկերի վրա հիմնված վերահսկողության մոտեցումը, «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ. որոնումներ, հեռանկարներ, լուծումներ: Գիտական հոդվածների ժողովածու» – 2 (11), Գ.Վ. Պլեխանովի անվան ՌՏՀ Երևանի մասնաճյուղ, Երևան՝ «ԻՆՖՈՎԿՈՊԻ» ՍՊԸ հրատ. – 2024, էջ 260-278, DOI: <https://doi.org/10.61546/25792679-2024.2.11-am-18>.

4. **Հ. Բաբայան** ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգի ներքին աուդիտի համապատասխանության հիմնախնդիրները, «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ. որոնումներ, հեռանկարներ, լուծումներ: Գիտական հոդվածների ժողովածու» – 2 (11), Գ.Վ. Պլեխանովի անվան ՌՏՀ Երևանի մասնաճյուղ, Երևան՝ «ԻՆՖՈՎԻՈՒԻ» ՍՊԸ հրատ. – 2024, էջ 279-295, DOI: <https://doi.org/10.61546/25792679-2024.2.11-hb-19>.
5. **H. Babayan, A. Matevosyan, V. Babayan, Z. Khanamiryan, M. Matevosyan** Machine Learning-based Optimization of Internal Controls in Credit Institutions, «*Engineering, Technology & Applied Science Research*» Vol. 15, No. 4, 2025, pp. 24667-24671, DOI: <https://doi.org/10.48084/etasr.11405>.
6. **H. Babayan, A. Matevosyan, V. Babayan, M. Matevosyan, and A. Vardanyan,** Optimizing Financial Ratios with AI: A Dynamic Control Framework for Credit Institutions, «*Engineering, Technology & Applied Science Research*» vol. 16, No. 1, Feb. 2026, pp. 32452-32458, DOI: <https://doi.org/10.48084/etasr.16309>.

БАБАЯН АИК
ОСНОВНЫЕ ВОПРОСЫ РЕГУЛИРОВАНИЯ СИСТЕМЫ ВНУТРЕННЕГО КОНТРОЛЯ
КРЕДИТНЫХ ОРГАНИЗАЦИЙ В РА

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 02.00.03 - «Финансы, бухгалтерский учет»

Защита диссертации состоится 2-го Июня 2026г. в 14:00 на заседании специализированного совета 014, действующего при Армянском государственном экономическом университете, по адресу: г. Ереван, Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Устойчивость и надежность финансовой системы в эпоху стремительно трансформирующихся цифровых технологий требует выработки четкого видения, выявления новых путей совершенствования системы внутреннего контроля.

Система внутреннего контроля представляет собой совокупность внутренней организационной структуры организации, бизнес-процессов, системы управления рисками, подотчетности, а также мер по их контролю.

Актуальность диссертации заключается в выявлении существующих проблем в процессе государственного контроля и регулирования кредитных организаций РА и предложении комплексных решений посредством искусственного интеллекта.

Цель и задачи исследования

Целью диссертации является выявление проблем и недостатков систем внутреннего контроля кредитных организаций РА и предложение путей их совершенствования. Для целей исследования были поставлены соответствующие задачи.

- Провести сравнительный анализ международного опыта кредитных институтов как в развитых странах, так и в странах Евразийского экономического союза, близких к финансовой системе Армении.

- Изучить подходы, применяемые в международной практике внутреннего контроля в кредитных организациях, а также выявить существующие проблемы в реализации внутреннего контроля в кредитных организациях Республики Армения.

- Выявлять проблемы финансового управления кредитных организаций Республики Армения с точки зрения комплексного надзора и предложить соответствующие пути их решения.

- Использование искусственного интеллекта для определения оптимальной структуры активов кредитных организаций и разработки решений на основе моделей для реструктуризации активов.

- С использованием моделей, построенных на основе инструментов искусственного интеллекта, осуществить улучшение операционной цели внутреннего контроля.

- Разработка риско-ориентированного подхода к внутреннему аудиту кредитных организаций.

Объект и предмет исследования

Объектом исследования выступают системы внутреннего контроля кредитных организаций, функционирующих на финансовом рынке Республики Армения, а также нормативно-правовая база, регулирующая финансовый контроль и деятельность этих организаций. Предметом исследования являются проблемы, направленные на совершенствование системы внутреннего контроля кредитных организаций Республика Армения.

Научная новизна заключается в следующем

В результате исследований и анализа, проведенных в диссертации, определены следующие научные новизмы:

- В результате проведенных исследований рекомендовано установить минимальные условия регулирования внутреннего контроля кредитных организаций, которые были бы направлены на снижение высокого риска системы внутреннего контроля.

- В результате комплексного исследования системы внутреннего контроля кредитных организаций Республики Армения выявлен ряд ключевых проблем, связанных с совершенствованием соблюдения законодательства, корпоративного управления и механизмов внутреннего контроля, а также предложены пути их решения.

- На основе анализа финансовых показателей кредитных организаций Республики Армения разработаны две модели эффективного управления активами.

- ✓ Первая модель дает возможность более эффективно управлять финансовыми ресурсами в рамках системы внутреннего контроля в кредитных организациях. С точки зрения внутреннего контроля модели позволяют руководителям, учредителям и исполнительным органам сформировать мнение о том, насколько деятельность компании соответствует законодательным и стратегическим требованиям бизнеса.
- ✓ С помощью второй модели получаются различные сценарные варианты структуры активов, что имеет важное значение для постановки стратегических задач и осуществления эффективного контроля.

- Разработана система показателей оценки риска внутреннего аудита, включающая двенадцать коэффициентов, направленная на повышение эффективности внутреннего контроля и снижение рисков.

BABAYAN HAYK
THE MAIN ISSUES OF REGULATING THE INTERNAL CONTROL SYSTEM OF CREDIT ORGANIZATIONS IN THE RA

The dissertation is submitted for pursuing a scientific degree of PhD in economic sciences in the field 02.00.03 - "Finance, bookkeeping accounting"

The defense of the dissertation will take place on June 2nd, 2026, at 14:00 at the meeting of the specialized council 014, operating at the Armenia State University of Economics, at the address: Yerevan, Nalbandyan 128.

ABSTRACT

In an era of quickly evolving digital technology, the reliability and stability of the financial system depends on the creation of a clear vision and the discovery of new approaches to enhancing the internal control system.

The internal control system is a collection of procedures designed to implement and oversee the company's internal organizational structure, business processes, risk management system, and accountability.

The importance of the dissertation lies in identifying current issues with the Republic of Armenia's credit institution supervision and regulation process and using artificial intelligence to suggest encompassing solutions.

The aim and objectives of the research.

The dissertation's purpose is to identify difficulties and inadequacies in the internal control systems of credit organizations in the Republic of Armenia, as well as develop ways to enhance them. To achieve the research purposes, the following tasks were assigned:

- Conducting a comparative analysis of the international experience of credit institutions, both in developed countries and in countries of the Eurasian Economic Union that are adjacent to Armenia's financial system.
- Assessing the approaches applied in foreign experience of internal control in credit organizations and identifying the challenges inherent in this process within credit organizations of the RA.
- Identifying RA credit organizations' financial management issues within the framework of general supervision and providing relevant solutions.
- Estimating the preferred asset structure of credit organizations and proposing model solutions for the restructuring of the asset composition by using artificial intelligence.
- Improving the operational objectives of internal control by applying models generated with artificial intelligence tools.
- Developing a risk-based control approach for credit organizations' internal audits.

Object and subject of the research

The legislative framework for financial results and activity regulation, as well as the internal control systems of credit organisations that operate in the Republic of Armenia's

financial market, are the objects of the study. The subject of this study is the challenges associated with the enhancement of the internal control system in credit institutions of the Republic of Armenia.

The scientific novelty of the thesis

As a result of the research and analysis conducted in the dissertation, the following scientific novelties have been identified.

- It was proposed to establish minimum requirements for regulating credit organisations' internal control as a consequence of the studies that were undertaken. This was done in an effort to reduce the high risk of the internal control system.

- Several important issues related to corporate governance, internal control mechanisms, and legislative compliance have been identified through a comprehensive analysis of the internal control systems of credit organizations in the Republic of Armenia. Possible solutions to these issues have also been proposed.

- Two models for efficient asset management were developed after analysis of RA credit organisations' financial indicators.

- ✓ Within the framework of credit organisations' internal control system, the first model offers a chance to handle financial resources more effectively. From the standpoint of internal control, models allow owners, executives, and supervisors to express their opinions about how well the company's operations adhere to legal and strategic requirements.

- ✓ The second model offers several scenario solutions for asset structure in order to pose strategic difficulties and identify potential answers. This is crucial for decision-makers when it comes to making more efficient use of already-existing opportunities.

- A system of internal audit risk assessment indicators consisting of twelve coefficients has been developed, aimed at enhancing the effectiveness of internal control and mitigating risks.

